ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2017

«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՊՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԵՐԵՎԱՆ - 2018

ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Սույն փաստաթուղթը «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ կամ Հիմնադրամ) 2017 թվականի գործունեության հաշվետվությունն է: Տարին ՈԱԱԿ-ի համար շրջադարձային էր իր միջազգային ճանաչման, գործունեության ներքին և արտաքին ոլորտներում ունեցած ձեռքբերումների տեսանկյունից:

• ՈԱԱԿ-ը շարունակում է իրականացնել հետևողական քայլեր՝ ամրապնդելու իր դիրքը երկրում և ճանաչումը եվրոպական կրթական տարածքում: Իրականացնելով միջազգայնացման իր ռազմավարական նպատակը՝ ՈԱԱԿ-ը 2017թ. դարձել է Որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի (ENQA) լիիրավ անդամ, ինչպես նաև գրանցվել է Որակի ապահովման եվրոպական ռեգիստրում (EQAR): 2017թ.-ին ՈԱԱԿ-ը դարձել է նաև Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի բարձրագույն կրթության որակի ապահովման գործակալությունների ցանցի (CEENQA) անդամ:

• 2017 թվականին ավարտվեց հանրապետության երկու տասնյակից ավել բարձրագույն ուսումնական հաստատությունների ինստիտուցիոնալ հավատարմագրման առաջին շրջափուլը: 2011թ. հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական Հավատարմագրման կարգին» և «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշներին» համապատասխան արդեն հավատարմագրվել են գրեթե բոլոր պետական բարձրագույն ուսումնական հաստատությունները (բացառությամբ ՀՀ ոստիկանության ակադեմիայի, իսկ ՀՀ ՊՆ Ռազմական ուսումնական հաստատություններն ավարտել են ինքնավերլուծության փուլը), և համեմատաբար մեծաքանակ ուսանողներ ունեցող ոչ պետական հաստատությունները: Այժմ հանրապետության ուսանողության մոտ 90%-ը սովորում է հավատարմագրված բուհերում:

Սկսվել է երկրորդ շրջափուլը պայմանական հավատարմագրում ստացած հաստատությունների համար:

Որակի ապահովման գործընթացներին միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ներգրավվածության մեծացմանն ուղղված Հիմնադրամի աշխատանքների շնորհիվ պետական 12 տարածաշրջանային և 63 այլ քոլեջներում սկսվել է որակի ապահովման ներքին համակարգերի ներդրման գործընթացներ: ԵՄ բյուջետային աջակցության «Որակավորումների բարելավում ավելի լավ աշխատատեղերի համար» ծրագրի շրջանակում սկսվել են հավատարմագրման գործընթացները գյուղատնտեսական ոլորտի 4 քոլեջում:

• ՈԱԱԿ-ի համար 2017թ. նշանակալի էր նաև կրթության ոլորտում օրենսդրական փոփոխություններին ակտիվ մասնակցության և դերակատարության տեսանկյունից: Հիմնադրամը հանդես է եկել կրթության կառավարման և որակի բարելավմանը միտված մի շարք առաջարկություններով, որոնք ամրագրվել են «ՀՀ Կառավարության 2017-2022թթ. ծրագրում» և «Բարձրագույն կրթության մասին» ՀՀ օրենքի նախագծում: Բարձրագույն կրթության համակարգի և բուհերի արդյունավետության բարձրացման նպատակով 2017-2022թթ. ծրագրով նախատեսվում է ներդնել արդյունավետության պայմանագրերի հիման վրա

ուսումնական հաստատությունների ֆինանսավորման համակարգ, բացի այդ 2022 թվականը սահմանվել է որպես Ծրագրային հավատարմագման վերջնաժամկետ: «Բարձրագույն կրթության մասին» ՀՀ օրենքի նախագծում ՈԱԱԿ-ի առաջարկությամբ վերանայվել են օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները և դրանց սահմանումները, Բարձրագույն կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքները, նպատակներն ու խնդիրները, որակավորման աստիճանները, ուսուցման ձևերը և ժամկետները, ինչպես նաև Բարձրագույն կրթության որակի ապահովմանը և դրա նկատմամբ վերահսկողությանը, Բուհի և մասնագիտության կրթական ծրագրերի հավատարմագրմանը վերաբերող հոդվածները: Նախատեսվել է նոր բացված մասնագիտության կրթական ծրագրերի նախնական հավատարմագրման գործընթաց, նախատեսվել է նաև ներդնել բուհերի կառավարման և գործունեության արդյունավետության գնահատման ցուցանիշներ:

- Որակի ապահովման միջազգային կառույցներին անդամակցությունը և նրանց հետ սերտ համագործակցությունը մեծացրել են ՈԱԱԿ-ի տարածաշրջանային ազդեցությունը: Համագործակցության պլաններ են մշակվում Վրաստանի հետ համատեղ գործողությունների կատարման վերաբերյալ, համաձայնություն է ձեռք բերվել ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարարության հետ Արցախի բուհերում որակի ապահովման համակարգերի ներդրմանն աջակցելու և հավատարմագրման գործընթացներ իրականացնելու վերաբերյալ:
- Մասնագիտական կրթության հիմնական շահակիցների՝ ուսանողների դերը և մասնակցության ակտիվությունը որակի ապահովման գործընթացներին մեծացել է Հայաստանի ուսանողների ազգային ասոցիացիայի, ուսումնական կառույցների և առանձին ուսանողների հետ ՈԱԱԿ-ի «Ուսանողության ձայն» ցանցի համագործակցության շնորհիվ: «Ուսանողության ձայնը» սկսել է աշխատանքները նաև քոլեջների հետ՝ նրանց ներկայացուցիչներին ներգրավելով ցանցում: 2017թ. ընթացքում «Ուսանողության ձայնի» կողմից վերապատրաստված 10 ուսանող-փորձագետներ են մասնակցել հավատարմագրման պրոցեսներին: Ուսանող-փորձագետների հավաքագրման գործընթացի թափանցիկությունն ու կայունությունն ապահովելու նպատակով ՈԱԱԿ-ի, ԿԳՆ-ի և ՀՈՒԱԱ-ի համագործակցության շրջանակներում ստեղծվել է Ազգային ուսանող-փորձագետների անկախ մարմին:
- Մասնագիտական կրթության ոլորտի և հավատարմագրման գործընթացի արդյունավետության համապարփակ վերլուծությունները, ինչպես նաև ՈԱԱԿ-ի կողմից իրականացված մշտադիտարկումները ցույց են տալիս, որ Հիմնադրամը շահակիցների կողմից ընկալվում է որպես անկախ և մասնագիտացված կառույց, որը երկրում ստեղծել է միջազգային չափորոշիչներին համապատասխան որակի արտաքին ապահովման համակարգ և իր գործունեությամբ զգալի ազդեցություն ունի մասնագիտական կրթության զարգացման միտումների վրա:

Որակի ապահովման համակարգերի ներդրմանը և զարգացմանը, ինչպես նաև ռազմավարական պլանավորմանը, ինքնավերլուծության իրականացմանը, գնահատման համակարգի բարելավմանն են ուղղված եղել շահակիցների հետ ՈԱԱԿ-ի համագործակցությունը և նրանց տրամադրվող աջակցությունը հաշվետու տարում: Այդ նպատակով ՈԱԱԿ-ն օգտագործել է իր ներուժը և միջազգային ծրագրերի ընձեռնած հնարավորություններն անձնակազմի, ինչպես նաև մասնագիտական ուսումնական հաստատությունների (այսուհետ՝ ՄՈՒՀ) ներկայացուցիչների վերապատրաստումների համար:

Հաշվետու տարում վերանայվել են վերապատրաստումների իրականացման ձևաչափն ու նյութը, և հիմնադրամի նախաձեռնությամբ ՄՈՒՀ-երի աշխատակիցների համար կազմակերպվել է ինստիտուցիոնալ կարողությունների զարգացմանը և կրթական ծրագրերի որակի ապահովմանն ուղղված վերապատրաստման 17 դասընթաց:

Ընդհանուր առմամբ 2017թ. վերապատրաստումներին մասնակցել է 134 հոգի 11 բուհերից և 32 քոլեջներից, ընդ որում բուհերից 5 խումբ՝ 100 հոգի, քոլեջներից 4 խումբ՝ 34 հոգի: 2017թ. ներառյալ վերապատրաստումների արդյունքում որակի ապահովման գործընթացում ընդգրկվել է քոլեջների ավելի քան 86%-ը: Ինստիտուցիոնալ հավատարմագրմանը նախապատրաստելու համար կազմակերպվել 2 ռազմական համալսարաններում յուրաքանչյուր բուհում կազմակերպվել է 8 աշխատաժողով, որոնց մասնակցել են ավելի քան 40 դասավանդող և կուրսանտ /յուրաքանչյուր բուհից/: Մեկնարկել է ՄՄՈՒՀ-երի համար փորձագետների վերապատրաստման գործընթացը, որին մասնակցել է քոլեջների 15 աշխատակից:

ՈԱԱԿ-ը վերամշակել է էլեկտրոնային բազայի կառուցվածքը, որը թույլ է տալիս նախապատրաստվել նաև ծրագրային և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հավատարմագրման գործընթացներին: Ներկայումս բազաներում ընդգրկված են շուրջ 400 տեղացի և միջազգային փորձագետ:

2017թ. ՈԱԱԿ-ի նորամուծություններից է գործատու-բուհ հարաբերությունների նոր մոդելի առաջարկը, որը հավանության է արժանացել շահակիցների կողմից:

Սույն փաստաթղթում ներկայացվում են հաշվետու տարում կատարված աշխատանքները՝ ըստ ՈԱԱԿ-ի գործունեության 2016-2020թթ. Ռազմավարական ծրագրի հիմնական ուղղությունների նպատակների և խնդիրների:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ 1

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 5

1.ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՐՏԱՔԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ 5

Հավատարմագրման շնորհման վերաբերյալ որոշումների կայացում 6

Գրառումներ հավատարմագրման պետական գրանցամատյանում 7

Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացների կազմակերպում 7

Ծրագրային հավատարմագրման գործընթացների կազմակերպում 10

Փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման բուհերի ծրագրեր 11

Միջին մասնագիտական կրթության և ուսուցման համակարգ 12

Մշտադիտարման իրականացում 13

2.ՈԱԱԿ-Ի ՆԿԱՏՄԱՄԲ ՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ԱՃԻՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ 17

Մարդկային ռեսուրսների կառավարում 23

Նյութատեխնիկական ռեսուրսների կառավարում 25

ՈԱԱԿ-ի կողմից իրականացվող գործընթացների պարբերական գնահատում 25

Բարելավմանը միտված գործողությունների պլանավորում և իրականացում 23

3.ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ 28

4.ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ 30

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ելնելով իր տեսլականից, նոր մարտահրավերներից և կրթության ոլորտի ամբողջական ուսումնասիրության արդյունքում բացահայտված շահակիցների կարիքներից, ՈԱԱԿ-ն իր 2016-2020թ.թ. Ռազմավարական ծրագրում սահմանել է գործունեության երեք հիմնական նպատակ.

1. Հիմնադրամի գործունեությամբ զգալիորեն նպաստել մասնագիտական կրթության որակի ապահովմանը,
2. լինել վստահելի կազմակերպություն բոլոր շահակիցների համար,
3. դառնալ միջազգայնորեն ճանաչված կազմակերպություն:

Ստորև մանրամասն ներկայացվում են ՈԱԱԿ-ի ձեռքբերումները համաձայն Ռազմավարական ծրագրի 2017թ.-ի համար նախատեսված աշխատանքների՝ ըստ գործունեության հիմնական նպատակների:

1. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՐՏԱՔԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Կառավարության 2011 թվականի N 978-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ-ում մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգի» համաձայն՝ ՀՀ-ում մասնագիտական կրթության որակի արտաքին ապահովումն իրականացվում է պետական հավատարմագրման երկու գործընթացներով՝ ինստիտուցիոնալ հավատարմագրում և մասնագիտության կրթական ծրագրի (ծրագրային) հավատարմագրում: Պարբերաբար իրականացող անկախ հավատարմագրումների միջոցով ՈԱԱԿ-ը հավաստում է ՀՀ-ում գործող մասնագիտական ուսումնական հաստատությունների և կրթական ծրագրերի համապատասխանությունը հավատարմագրման չափանիշներին, ուսումնական հաստատությունների գործունեության արդյունավետությունը և մատուցվող կրթական ծառայությունների որակը՝ դրանով իսկ ապահովելով հասարակության վստահությունը կրթական համակարգի նկատմամբ: ՀՀ մասնագիտական կրթության որակի արտաքին ապահովման գործող համակարգը ներկայումս ոլորտում բարեփոխումների իրականացման հիմնական մեխանիզմներից է: Հավատարմագրման գործընթացի արդյունավետության գնահատման արդյունքների հիման վրա կարելի է փաստել, որ գործընթացները շոշափելի ազդեցություն ունեն ՄՈՒՀ-երի կառավարման մոտեցումների բարելավման վրա:

Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնը 2017թ.-ին մասնագիտական կրթության որակի արտաքին ապահովման ուղղությամբ ըստ ռազմավարական նպատակների իրականացրել է հետևյալ գործունեությունը.

Նպատակ 1.1. ՄՈՒՀ-երի և դրանցում իրականացվող կրթական ծրագրերի՝ Հիմնադրամի կողմից կազմակերպված գնահատումները հիմք են որակի հավաստման և բարելավման համար:

Այս նպատակին հասնելու համար անհրաժեշտ էր.

- ապահովել փորձաքննությունների իրականացումը հանրության շահերն արտացոլող չափանիշների և չափորոշիչների հիման վրա,
- կազմակերպել ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման գործընթացներ՝ ապահովելով ուսանողների գերակշիռ մասի շահերը,
- իրականացնել այնպիսի փորձաքննություններ, որ ՄՈՒՀ-երը որակի բարելավման իրենց գործողություններն իրականացնեն այդ գնահատումների հիման վրա՝ գիտակցելով դրանց օգտակարությունն իրենց համար:

ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները պարբերաբար գնահատվում են ուսումնական հաստատություններում ինքնավերլուծություն իրականացրած աշխատակազմի և հավատարմագրման փորձագիտական խմբերում ընդգրկված մասնագետների կողմից: Դրանք քննարկվել են ՄՈՒՀ-երի ներկայացուցիչների հետ՝ Որակի ապահովման եվրոպական ցանցին անդամակցելու փորձնական այցի և փորձագիտական այցի նախապատրաստական աշխատանքների, ինչպես նաև Հիմնադրամի ինքնավերլուծության ընթացքում: Չափանիշների մեկնաբանության առանձին քննարկումներ են կազմակերպվել միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների տնօրենների և աշխատակիցների հետ: ՄՈՒՀ-երի հետ տարվել են չափանիշների կիրառության պարզաբանման աշխատանքներ, և հավատարմագրման բոլոր գործընթացներում կիրառվել են գործող չափանիշները և հաստատված ընթացակարգերը:

Ծրագրային հավատարմագրմանը նախապատրաստման նպատակով ՈԱԱԿ-ի նախաձեռնած համապատասխան չափորոշիչների կիրառությունը քննարկվել է ՄՈՒՀ-երի տարբեր օղակների ներկայացուցիչների, ուսանողների նաև ԿԳՆ հետ: Որակավորումների ոլորտային շրջանակների մշակումից հետո հնարավոր կլինի ուսումնասիրել ծրագրային հավատարմագրման չափանիշների վերանայման անհրաժեշտությունը:

Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հետ քննարկումները և մասնագիտական առանձնահատկություններ ունեցող բուհերի նկատմամբ հավատարմագրման չափանիշների կիրառման փորձը ցույց են տալիս, որ չափանիշները բավական ունիվերսալ են և կիրառելի:

Շահակիցների հետ քննարկումները ցույց են տալիս, որ շահակիցները հիմնականում բավարարված են հավատարմագրման չափանիշներով:

Հավատարմագրման շնորհման վերաբերյալ որոշումների կայացում

2015 թվականի փետրվարից սկսած ՈԱԱԿ-ի Հավատարմագրման հանձնաժողովը կայացնում է որոշումներ հավատարմագրման գործընթացների վերաբերյալ: 2017 թվականին Հավատարմագրման հանձնաժողովը կայացրել է որոշումներ 3 բուհերի վերաբերյալ, որոնց շնորհվել է հավատարմագրում 4 կամ 2 տարի ժամկետներով, դրանով իսկ փակել է ինստիտուցիոնալ հավատարմագրման առաջին փուլը:

Որոշումները կայացվել են հետևյալ բուհերի վերաբերյալ՝

	Բուհի անվանումը	Շնորհված հավատարմագրումը
1	ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոն	ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 տարի ժամկետով
2	Գավառի պետական համալսարան	ինստիտուցիոնալ հավատարմագրում 4 տարի ժամկետով
3	ՀՀ ԱԻՆ Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա	ինստիտուցիոնալ հավատարմագրում 2 տարի ժամկետով

Գրառումներ հավատարմագրման պետական գրանցամատյանում

ՈԱԱԿ-ը վերոնշյալ երեք բարձրագույն ուսումնական հաստատությունների ինստիտուցիոնալ հավատարմագրումների մասին գրառումներ է կատարել հավատարմագրման պետական գրանցամատյանում (տես ՈԱԱԿ-ի http://www.anqa.am հասցեով կայքէջը):

Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացների կազմակերպում

2017թ.-ին իրականացվել են ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացներ 7 բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ Գավառի պետական համալսարանում, ՀՀ ԳԱԱ միջազգային գիտակրթական կենտրոնում, ՀՀ ԱԻՆ Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայում, Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայում, Երևանի հյուսիսային համալսարանում, Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայում և Գորիսի պետական համալսարանում:

ՈԱԱԿ-ի հոգաբարձուների խորհրդի հաստատած «Փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան՝ ձևավորվել և ուսումնական հաստատությունների հետ համաձայնեցվել են փորձագիտական խմբերը: Յուրաքանչյուր փորձագիտական խմբում ընդգրկվել են 2 կամ 3 տեղացի, 1 -2 միջազգային փորձագետ և 1 ուսանող: Որպես միջազգային փորձագետներ ընտրվել են՝

- **Մարգարեթ Բյուլոու Շրամ -** Համբուրգի համալսարանի պրոֆեսոր, մանկ. գիտ. դոկտոր (Գավառի պետական համալսարան),
- **Ազիր Ալուա** – փիլ. դոկտոր (PhD) Համակարգչային գիտությունների ոլորտում, Հարավ-Արևելյան Եվրոպական համալսարանի պրոֆեսոր, Մակեդոնիայի վարչապետի խոհրդական գիտության, բարձրագույն կրթության և ինֆորմացիոն-տեխնոլոգիաների գծով (ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոն),
- **Յուլիա Դուբրովսկայա** – ՌԴ Ս.Պետերբուրգի հակահրդեհային ծառայության պետական համալսարան, ուսումնա-մեթոդական բաժնի պետի տեղակալ, ՌԴ ԿԳՆ կրթության եւ գիտության վերահսկողության դաշնային ծառայության հավատարմագրված փորձագետ, մանկ.գիտ.թեկն., դոցենտ (ՀՀ ԱԻՆ Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա),
- **Իրինգ Վասսեր -** Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի Հավատարմագրման և Որակի ապահովման ցանցի (CEENQA) նախագահ, Գերմանիայի բնական գիտությունների, ճարտարագիտության, ինֆորմատիկայի և մաթեմատիկայի որակի ապահովման կենտրոնի (ASIIN) գործադիր տնօրեն (Երևանի հյուսիսային համալսարան),

- **Յորգ Լոնգմուս** – Գերմանական <<ASIIN>> Ինժիներական, համակարգչային և բնական գիտությունների և մաթամատիկայի ոլորտում հավատարմագրում իրականացնող կազմակերպության անդամ է, Բեռլինի Բեութի տեխնիկական համալսարանի դասախոս (Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա),
- **Հերբերտ Յոհան Լոռենց Գրյուներ** – Սուրբ Գալենի համալսարանի մենեջերների համար նախատեսված ուսումնական ծրագրերի դասընթացների տնօրեն, համալսարանի դասախոս (Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա),
- **Բրուվայլեր Հանս-Քրիստիան –** Գերմաիայի Զվիկաու քաղաքի կիրառական գիտությունների արևմտյան սաքսոնական համալսարանի դասախոս (Երևանի գեղարվեստի պետական ակադեմիա),
- **Լյուսիեն Բոլաերտ** - Բրյուսելի համալսարանի պրոֆեսոր, Որակի ապահովման Եվրոպական գրանցամատյանի (EQAR) գրանցման հանձնաժողովի փոխնախագահ, հավատարմագրման բելգիական AEQES գործակալության խորհրդի անդամ (Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիա),
- **Մաչեի Մարկովսկի -** կրթության կառավարման ոլորտի գիտությունների թեկնածու, Լեհաստանի հավատարմագրման հանձնաժողովի որակի ապահովման փորձագետ (Գորիսի պետական համալսարան):

Ըստ Հավատարմագրման կարգով սահմանված ընթացակարգի և հաստատված ժամանակացույցի՝

1) իրականացվել են ինքնավերլուծությունների ու կից փաստաթղթերի նախնական ուսումնասիրություն և փորձագիտական այցեր ուսումնական հաստատություններ;
2) սահմանված ժամկետներում կազմվել են փորձագիտական խմբերի նախնական զեկույցները և տրամադրվել բուհերին: Բուհերի առարկությունները հաշվի առնելով՝ լրամշակվել են վերջնական զեկույցները;
3) փորձագիտական զեկույցներում տրված խորհրդատվությունների հիման վրա ինստիտուցիոնալ հավատարմագրում անցած բուհերը մշակել են թերությունների վերացման ծրագիր, որոնք գնահատվել են նույն փորձագիտական խմբերի կողմից, և կցվել Հավատարմագրման հանձնաժողովին տրամադրվող փաստաթղթերի փաթեթին՝ որոշման կայացման համար:

2017թ.-ին ևս 4 ուսումնական հաստատություն՝

- ՀՀ ՊՆ Վ.Սարգսյանի անվ. ռազմական համալսարանը,
- ՀՀ ՊՆ մարշալ Ա.Խանփերյանցի անվ. ռազմական ավիացիոն համալսարանը,
- Եվրասիա միջազգային համալսարանը,
- Երևանի Հայկական բժշկական ինստիտուտը,

դիմում-հայտ են ներկայացրել ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու նպատակով, գործընթացները կավարտվեն 2018թ.-ին:

Տեմպուսի TNE QA ծրագրի շրջանակներում փորձանական արտաքին գնահատում են անցել 3 տրանսազգային ուսումնական հաստատություններ՝

- Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանը,
- Հայաստանում ամերիկյան համալսարանը,
- Հայաստանում ֆրանսիական համալսարանը:

Մինչև գնահատման գործընթացներն իրականացվել են նախապատրաստական աշխատանքներ. մշակվել է ինքնավերլուծության ձևաչափը տրանսազգային հաստատությունների համար, բուհերն իրականացրել են ինքնավերլուծություն, հաստատվել են այցերի ժամանակացույցերը, ձևավորվել են փորձագիտական խմբերը: Փորձագիտական այցերը տեղի են ունեցել 2017թ. մարտ ամսին: Ուսումնասիրությունների հիման վրա բուհերին տրամադրվել են բարելավմանը միտված խորհրդատվություններ:

Տեմպուսի GOVERN ծրագրի շրջանակներում փորձնական արտաքին գնահատում են անցել՝

- Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը,
- Հյուսիսային համալսարանը,
- Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանը,
- Վանաձորի Հ.Թումանյանի անվան պետական համալսարանը,
- Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանը,
- ՀՀ պետական կառավարման ակադեմիան,
- Հայաստանի ազգային ագրարային համալսարանը,
- Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանը:

2017 թվականին Տեմպուսի VERITAS ծրագրի շրջանակներում մշակվել է SWOT վերլուծության իրականացման ձևաչափը, որի հիման վրա գործընկեր համալսարաններն իրականացրել են վերլուծություններ և ստացել համապատասխան արձագանք ՈԱԱԿ-ի կողմից: Ծրագրի շրջանակներում մշակվել է նաև ինքնավերլուծության ձևաչափը՝ ասպիրանտական կրթության որակի ապահովման չափանիշ/չափորոշիչների հիման վրա, որի համաձայն ՀՀ գործընկեր 11 բուհերում հետազոտողի կրթական ծրագրերի արտաքին գնահատում է իրականացվել՝

- Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա
- Երևանի պետական համալսարան
- Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան
- Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան,
- Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան
- Գավառի պետական համալսարան
- Վանաձորի Հ.Թումանյանի անվան պետական համալսարան
- Հյուսիսային համալսարան
- ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոն
- ՀՀ պետական կառավարման ակադեմիա
- Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան:

Տեմպուսի PICASA ծրագրի շրջանակներում ՈԱԱԿ-ը հանդես է եկել կրթական ծրագրերի միջազգայնացմանը և դրանց որակի ապահովմանը նվիրված առաջարկություններով, որոնք ամփոփվել և ներկայացվել են ՀՀ Կառավարություն: 2017 թվականին ՈԱԱԿ աշխատակիցները, որպես արտաքին գնահատման փորձագետներ, այցելել են ծրագրի գործընկեր բուհեր (Բելառուս, Ուկրաինա)՝ տրամադրելով համեմատական վերլուծություն երկրի տարբեր բուհերում միջազգայնացման գործընթացների վերաբերյալ:

Հաշվետու տարում ՈԱԱԿ-ը նախնական համաձայնության է եկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության հետ Արցախի բուհերում որակի հավաստման գործընթացներ իրականացնելու վերաբերյալ՝ հաշվի առնելով ՈԱԱԿ-ի ճանաչելիությունը միջազգային ասպարեզում:

Ծրագրային հավատարմագրման գործընթացների կազմակերպում

Եթե 2014թ. ՀՀ Կառավարության որոշմամբ հստակեցվեցին ինստիտուցիոնալ հավատարմագրումների ժամկետները և նոր կարգով հավատարմագրման դիմելու վերջնաժամկետը, ապա ծրագրային հավատարմագրումը դեռևս մնում է կամավոր գործընթաց ուսումնական հաստատությունների համար:

ՈԱԱԿ-ի փորձագիտական խմբերն ինստիտուցինալ հավատարմագրման շրջանակներում իրականացնում են 3 կրթական ծրագրերի գնահատումներ և խորհրդատվություններ են տրամադրում դրանց բարելավման ուղղությամբ: Նախապատրաստական աշխատանքներ են տարվում հավատարմագրման երկրորդ շրջափուլի ընթացքում կազմակերպել հաստատությունների կողմից իրականացվող բոլոր կրթական ծրագրերի փորձաքննություն:

2017թ. ձեռքբերումներից է, որ ՈԱԱԿ-ի առաջարկության հիման վրա ՀՀ Կառավարության 2017-2022թթ. երկրի կայուն զարգացումը երաշխավորող գործունեության ծրագրում ծրագրային հավատարմագրումը դարձել է պարտադիր գործընթաց: <<Բարձրագույն կրթության մասին>> ՀՀ օրենքի նախագծում ներդրվել է նախնական հավատարմագրման գործընթացը, որպես ծրագրային հավատարմագրման փուլ: Ինչպես նաև կառույցի առաջարկությունների հիման վրա <<Բարձրագույն կրթության մասին>> ՀՀ օրենքի նախագծում նախատեսվել է Բուհերի գործունեության արդյունավետության ցուցանիշների ներդրում:

Ուսումնական հաստատությունների ֆինանսական սուղ ռեսուրսների պայմաններում կարճ ժամանակամիջոցում մասնագիտական կրթության որակի բարելավմանը կարող է նպաստել կրթական ծրագրերի խմբային աուդիտը, որը կխթանի մասնագիտությունների խոշորացումը, կապահովի հավատարմագրման ծախսերի կրճատումը: Խմբային /կլաստերային/ աուդիտը ՈԱԱԿ-ը դիտարկում է ծրագրային հավատարմագրման նախապատրաստական փուլ, որը պետք է ուղղված լինի ուսումնական պրոցեսի կազմակերպման գնահատմանը: Հավատարմագրում անցած ուսումնական հաստատությունների, ուսանողների և ԿԳՆ ներկայացուցիչների հետ շարունակվում են քննարկումները խմբային աուդիտի սկզբունքերի, չափանիշների և ընթացակարգի շուրջ:

Հաշվետու տարում աշխատանքներ են տարվել որակավորումների ոլորտային բնութագրիչների մշակման ուղղությամբ. մասնավորապես՝ պարբերական հանդիպում-քննարկումներ են կազմակերպվել տնտեսագիտության ոլորտի ներկայացուցիչների հետ:

Փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման բուհերի ծրագրեր

ՀՀ կառավարության 11.12.2014 N 1397–Ն որոշմամբ «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգի համաձայն հավատարմագրում շնորհելու որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում, ուսումնական հաստատությունն ՈԱԱԿ-ին է ներկայացնում փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների՝ հաստատության կողմից հաստատված ծրագիրը և համապատասխան ժամանակացույցը:

2017-ին հավատարմագրում ստացած բոլոր ուսումնական հաստատությունները ՈԱԱԿ են ներկայացրել թերությունների վերացման գործողությունների ծրագրերը և ժամանակացույցերը: Բուհերը հավատարմագրման որոշումից առաջ ներկայացրած իրենց պլանները վերանայել են ՈԱԱԿ-ի Հավատարմագրման հանձնաժողովի առաջարկությունների հիման վրա:

Հավատարմագրման կարգի համաձայն 4 կամ 6 տարի հավատարմագրում ստացած ուսումնական հաստատությունները 2 տարին մեկ անգամ պարտավոր են իրականացնել ինստիտուցիոնալ ներքին գնահատում և արդյունքները ներկայացնել ՈԱԱԿ:

Նախատեսված ժամկետներում հաշվետվություններ են ներկայացրել Երևանի պետական, Երևանի պետական բժշկական, Գլաձոր, Հայաստանի պետական լեզվահասարակագիտական, Հայաստանի պետական տնտեսագիտական և Հայաստանի ազգային արգրարային համալսարանները, ինչպես նաև Երևանի պետական կոնսերվատորիան և ՀՀ պետական կառավարման ակադեմիան:

Հավատարմագրման կարգի պահանջներին համապատասխան՝ պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրում ստանալու պահից յուրաքանչյուր վեց ամիսը մեկ անգամ ուսումնական հաստատությունը ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց է ներկայացնում փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման մասին:

Հավատարմագրումից հետո երրորդ 6 ամսվա ընթացքում իրականացված գործողությունների վերաբերյալ հաշվետվություններ ներկայացրել է Եվրասիա միջազգային համալսարանը, որն ուսումնասիրվել է համակարգողի կողմից: Մխիթար Գոշ ռուս-հայկական համալսարանը հաշվետվություն չի ներկայացրել: Երկու բուհերը դիմումներ են գրել ՈԱԱԿ՝ հավատարմագրման նոր գործընթացների մասնակցելու համար:

Պայմանական հավատարմագրում ստացած Հյուսիսային համալսարանում նույնպես 2017թ. սկսվել է հավատարմագրման նոր գործընթաց:

Միջին մասնագիտական կրթության և ուսուցման համակարգ

Հաշվետու տարվա հուլիս-սեպտեմբեր ամիսներին ՈԱԱԿ-ը 12 տարածաշրջանային քոլեջների հետ կազմակերպել և իրականացրել է առցանց վերապատրաստումներ ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշների ուղղությամբ՝ վերանայված

ձևաչափով և բովանդակությամբ: Վերապատրաստման արդյունքում քոլեջների կողմից գրված ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունների բովանդակային բարելավումներն, ինչպես նաև քոլեջներում իրականացված բարեփոխումները փաստում են իրականացված վերապատրաստումների արդյունավետության մասին:

Հաշվետու տարում փորձնական փոխգնահատում է իրականացվել 6 տարածաշրջանային պետական քոլեջում (Գեղարքունիքի, Կոտայիք, Արմավիրի, Արարատի, Վայոց ձորի, Լոռու): Մինչ այցելությունների մեկնարկը տարածաշրջանային պետական քոլեջների աշխատակիցները որպես փորձագետներ վերապատրաստվել են ՈԱԱԿ-ում: Քոլեջներ այցելության փուլը վերապատրաստումների գործնական բաղադրիչն էր, որը նպատակ է ունեցել քոլեջների աշխատակիցներին տրամադրել հարթակ՝ վերապատրաստումների ընթացքում ձեռքբերված գիտելիքներն ու հմտությունները գործնականում կիրառելու, միջին մասնագիտական ուսումնական հաստատություններին ինստիտուցիոնալ հավատարմագրման նախապատրաստելու համար: Իսկ ՈԱԱԿ-ի աշխատակիցներին գործընթացը օգնելու էր բացահայտել հնարավոր փորձագետներին՝ ՈԱԱԿ փորձագիտական բազան համալրելու համար:

Իրականացված փորձնական փոխգնահատումների ընթացքում ՈԱԱԿ աշխատակիցներն իրականացրել են քոլեջներում տիրող իրավիճակի մշտադիտարկում, ինչը թույլ տվեց որդեգրել նոր մոտեցումներ քոլեջների հավատարմագրման գործընթացների վերաբերյալ: Տարածաշրջանային 6 քոլեջում իրականացված փորձնական փոխգնահատումներին որպես փորձագետ մասնակցած քոլեջների 12 աշխատակցից, ինչպես նաև ՈԱԱԿ վերապատրաստումներին մասնակցած մնացյալ տարածաշրջանային քոլեջների աշխատակիցներից՝ քոլեջների ՈԱԱԿ փորձագիտական բազան համալրելու համար ընտրվել են թեկնածուներ, իսկ քոլեջներում ձևավորվել են որակի ներքին ապահովմամբ զբաղվող համապատասխան կադրեր: Փոխգնահատումների ընթացքը ցույց տվեց, որ քոլեջների համար դրական է ընկալվում մեկ այլ քոլեջի աշխատակցի փորձագիտական այցը, քանի որ վերջինս առավել լավ է ըմբռնում քոլեջներում տիրող իրավիճակն ու առկա խնդիրները:

2017թ. ընթացքում հստակեցվել է քոլեջների ինստիտուցիոնալ հավատարմագրման ֆինանսական պատկերը, վերանայվել են ինքնավերլուծության ձևաչափը, որակի ներքին ապահովման համակարգերի ներդրման, բարելավման, ինչպես նաև փորձագիտական աշխատանքի վերաբերյալ իրականացվող վերապատրաստումների ձևաչափերը և բովանդակությունները:

Հաշվետու տարում ՈԱԱԿ-ը ստորագրել է ԵՄ բյուջետային աջակցության «Որակավորումների բարելավում ավելի լավ աշխատատեղերի համար» համաձայնագիրը: Համաձայնագրի դրույթների իրականացման համար ՈԱԱԿ ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի կողմից մշակվել է գործողությունների պլան և ժամանակացույց:

2017թ.-ի ընթացքում ՈԱԱԿ-ը հանդիպումներ է ունեցել ՄԿՈ ոլորտի շահակիցների հետ՝ մասնակցելով աշխատաժողովների, կլոր-սեղան քննարկումների, անհատական հանդիպումների՝ տրամադրելով համապատասխան տեղեկատվություն, օժանդակություն և խորհրդատվություն շահակիցներին: Իրականացվել են հանդիպումներ քոլեջների տնօրենների և որակի ապահովման պատասխանատուների հետ: Ընթացիկ տարում ՄԿՈ ոլորտի ներկայացուցիչները մասնակցել են «Որակի շաբաթ» միջոցառումների շարքին:

2017թ.-ին մեկնարկել է ՄԿՈ հաստատությունների համար էլեկտրոնային հարցաշարի վերանայման աշխատանքները:

Մշտադիտարկումների իրականացում

2017թ. ընթացքում ՈԱԱԿ-ը մշտադիտարկումներ է իրականացրել ինստիտուցիոնալ հավատարմագրում ստացած ուսումնական հաստատություններում՝ հետևելու որակի ներքին ապահովման համակարգերի գործունեությանը և փորձագիտական զեկույցում մատնանշված թերությունների վերացման աշխատանքների ընթացքին, դրանց համապատասխանությանը սահմանված ժամանակացույցին:

Մշտադիտարկումների նպատակն էր հավաստիանալ, որ հավատարմագրում ստացած բուհերը կատարում են ստանձնած պարտավորությունները կրթության որակի շարունակական բարելավման ապահովման առումով:

Մշտադիտարկման նպատակով այցեր են եղել 10 բուհեր, իսկ արդյունքների վերաբերյալ կազմվել են հաշվետվություններ:

2017-ին ՈԱԱԿ-ը առանձնակի ուշադրություն է հատկացրել բժշկական կրթական ծրագրեր իրականացնող ոչ պետական ուսումնական հաստատություններին: Որակի ներքին ապահովման համակարգերի մշտադիտարկման նպատակով այցեր են իրականացվել բժշկական ծրագրեր իրականացնող հինգ մասնագիտական ուսումնական հաստատություններ.

-Երևանի Հայկական բժշկական ինստիտուտ,
- Երևանի Սուրբ Թերեզայի անվան համալսարան,
- Երևանի Ավանդական բժշկական համալսարան,
- Երևանի Մենեջմենթի համալսարան,
- Երևանի Հայբուսակ համալսարան:

Ուսումնասիրվել են որակի ներքին ապահովման համակարգի ներդրվածության աստիճանը, գործող մեխանիզմները և բուհերի նախապատրաստվածության աստիճանը ինստիտուցիոնալ հավատարմագրմանը: Այցերի արդյունքների հիման վրա պատրաստվել են մշտադիտարկման հաշվետվություններ:

2017թ. ավարտվեց հավատարմագրման առաջին շրջափուլը երկու տասնյակից ավել բարձրագույն ուսումնական հաստատությունների համար, որոնցում սովորում են հանրապետության ուսանողության մոտ 90%-ը: Պետական բոլոր հաստատությունները, բացի ՀՀ Ոստիկանական ակադեմիայի կամ արդեն անցել են հավատարմագրում, կամ ընդգրկված են գործընթացում: Մասնավոր բուհերի այն 20%-ն է մասնակցել հավատարմագրմանը, որոնք ունեն մեծաքանակ ուսանողներ:

Սկսվել է երկրորդ շրջափուլը պայմանական հավատարմագրում ստացած հաստատությունների համար:

Պետական 12 տարածաշրջանային և 63 այլ քոլեջներում սկսվել է որակի ապահովման ներքին համակարգերի ներդրման գործընթացներ: ԵՄ բյուջետային աջակցության ծրագրի շրջանակում սկսվել են հավատարմագրման գործընթացները գյուղատնտեսական ոլորտի 4 քոլեջում:

Մշտադիտարկումները ցույց են տալիս, որ բուհերը հետևում են փորձագետների խորհրդատվությունների հիման վրա կառուցված բարելավման պլանների իրականացմանը:

Նպատակ 1.2. ՄՈՒՀ-երին տրամադրվում են խորհրդատվական ծառայություններ:

Այս նպատակին ուղղված՝ հաշվետու տարում նախատեսված էր՝

- Հիմնադրամի նախաձեռնությամբ որակի ապահովման մեթոդաբանության վերաբերյալ պարբերական խորհրդատվությունների տրամադրում,
- ՄՈՒՀ-երի նախաձեռնությամբ ՈԱ խնդիրների հաղթահարմանն ուղղված թիրախային խորհրդատվությունների տրամադրում:

Հաշվետու տարում վերանայվել է վերապատրաստումների իրականացման ձևաչափն ու նյութը, և հիմնադրամի նախաձեռնությամբ վերապատրաստման խմբեր են ձևավորվել ու ՄՈՒՀ-երի աշխատակիցների համար կազմակերպվել է ինստիտուցիոնալ կարողությունների զարգացմանը և կրթական ծրագրերի որակի ապահովմանն ուղղված վերապատրաստման 17 դասընթաց: Ընդհանուր առմամբ, կազմավորվել է վերապատրաստման 9 խումբ: Դասընթացները կազմակերպվել են 3 թիրախային խմբերի համար. ինստիտուցիոնալ հավատարմագրում ստացած բուհերի համար ծրագրային հավատարմագրմանը նախապատրաստվելու նպատակով, գործընթացը չանցած բուհերի և քոլեջների համար՝ ինստիտուցիոնալ հավատարմագրմանը նախապատրաստվելու նպատակով, ինչպես նաև քոլեջների ինստիտուցիոնալ հավատարմագրման հնարավոր փորձագետների համար: Ընդհանուր առմամբ 2017թ. վերապատրաստումներին մասնակցել է 134 հոգի 11 բուհերից և 32 քոլեջներից, ընդ որում բուհերից 5 խումբ՝ 100 հոգի, քոլեջներից 4 խումբ՝ 34 հոգի: 2017թ. ներառյալ վերապատրաստումների արդյունքում որակի ապահովման գործընթացում ընդգրկվել է քոլեջների ավելի քան 86%-ը: 2017թ. մեկնարկել է միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների համար փորձագետների վերապատրաստման գործընթացը, որին մասնակցել է քոլեջների 15 աշխատակից:

Վերապատրաստումների գնահատման քանակական տվյալների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ վերապատրաստում անցած ՄՈՒՀ-երի աշխատակիցների ավելի քան 90%-ը բավարարված է եղել ՈԱԱԿ-ում անցկացվող վերապատրաստումներից: Անհրաժեշտ է նշել, որ շահակիցների որակական գնահատումների հիման վրա ՈԱԱԿ-ում կազմակերպվող վերապատրաստման ծրագիրն անընդհատ բարելավվում է:

ՄՈՒՀ-երի նախաձեռնությամբ ՈԱ խնդիրների հաղթահարմանն ուղղված թիրախային խորհրդատվությունների տրամադրումը ՄՈՒՀ-երի աշխատակիցներին մշտական բնույթ է կրում: Շահակիցներին խորհրդատվություն է տրամադրվել հիմնականում հետևյալ հիմնահարցերի ուղղությամբ.

- ինստիտուցիոնալ հավատարմագրում անցած բուհերին՝ փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ծրագրի կազմման, աշխատանքների պլանավորման, կատարողականի ցուցիչների մշակման, իրականացվող աշխատանքների մշտադիտարկման կազմակերպման, ՄԿԾ-երի վերանայման, ուսանողի գնահատման մեթոդաբանության վերանայման ուղղությամբ,
- միջին մասնագիտական ուսումնական հաստատություններին՝ որակի ապահովման ներքին համակարգի ներդրման, կառույցի ստեղծման, աշխատանքների պլանավորման, շահակիցների հետ հետադարձ կապի մեխանիզմների ստեղծման,

ինստիտուցիոնալ ինքնավերլուծության իրականացման, չափորոշիչների մեկնաբանման ուղղությամբ:

Ինստիտուցիոնալ հավատարմագրմանը նախապատրաստելու համար աշխատաժողովներ են կազմակերպվել 2 ռազմական համալսարաններում: ՀՀ պաշտպանության նախարարության հետ կնքված պայմանագրերի և հաստատված ծրագրերի համաձայն յուրաքանչյուր բուհում կազմակերպվել է 8 աշխատաժողով, որոնց մասնակցել են ավելի քան 40 դասավանդող և կուրսանտ /յուրաքանչյուր բուհից/:

Խորհրդատվություն տրամադելու նպատակով այցեր են կատարվել ՀՀ Ոստիկանության կրթահամալիր, միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ: Կազմակերպվել է հանդիպում քոլեջների տնօրենների և որակի ապահովման պատասխանատուների հետ:

2017թ. վերանայվել են վերապատրաստումների իրականացման ձևաչափն ու նյութը: Վերապատրաստումներին մասնակցել է 134 հոգի 11 բուհերից և 32 քոլեջներից, ընդ որում բուհերից 5 խումբ՝ 100 հոգի, քոլեջներից 4 խումբ՝ 34 հոգի: 2017թ. ներառյալ վերապատրաստումների արդյունքում որակի ապահովման գործընթացում ընդգրկվել է քոլեջների ավելի քան 86%-ը:

Ինստիտուցիոնալ հավատարմագրմանը նախապատրաստելու համար կազմակերպվել 2 ռազմական համալսարաններում յուրաքանչյուր բուհում կազմակերպվել է 8 աշխատաժողով, որոնց մասնակցել են ավելի քան 40 դասավանդող և կուրսանտ /յուրաքանչյուր բուհից/: Մեկնարկել է ՄՄՈՒՀ-երի համար փորձագետների վերապատրաստման գործընթացը, որին մասնակցել է քոլեջների 15 աշխատակից:

Վերապատրաստումներից հետո անցկացված հարցումների համաձայն մասնակիցների ակնկալիքներն արդարացել են 90 տոկոսով:

Նպատակ 1.3. Հիմնադրամն իրականացնում է ուսումնասիրություններ և վերլուծություններ՝ վերհանելու մասնագիտական կրթության ոլորտում որակի ապահովման հիմնախնդիրները և լավագույն փորձը:

Այս նպատակին հասնելու համար հաշվետու տարում անհրաժեշտ էր՝

- պարբերաբար իրականացնել և հրապարակել թեմատիկ ուսումնասիրություններ,
- փորձաքննությունների հիման վրա հրապարակել ամփոփ տեղեկություններ և վերլուծություններ,
- կազմակերպել ՄՈՒՀ-երի միջև որակի ապահովմանն առնչվող փորձի փոխանակում:

2017թ.-ին Հավատարմագրման գործընթացի շարունակական բարելավման նպատակով կատարվել է իրականացված գործընթացների արդյունավետության վերլուծություն: Վերջինս հնարավորություն է տալիս բացահայտել գործընթացի փաստացի վիճակը, ուժեղ կողմերը, խնդիրներն ու բացթողումները, վերանայել ու կատարելագործել (ըստ նպատակների ու խնդիրների) փաստաթղթային հենքն ու ողջ գործընթացը: Իրականացված հավատարմագրման գործընթացների արդյունավետության գնահատումն ու վերլուծությունն իրականացնելու նպատակով ըստ հավատարմագրման գործընթացի առանձին փուլերի (ինքնավերլուծություն, նախնական գնահատման գործընթաց, փորձագիտական այց,

փորձագիտական զեկույց) անցկացվել է անանուն հարցում հավատարմագրված բուհերի և տեղացի ու միջազգային փորձագետների շրջանում:

Հավատարմագրման գործընթացի արյունավետության ուսումնասիրությունից զատ՝ իրականացվել են հարցումներ և այլ ուսումնասիրություններ՝ շահակիցների կարիքները, ոլորտի խնդիրները, լավագույն փորձը բացահայտելու նպատակով: Հրապարակումների շարքում է բարձրագույն կրթության միջազգայնացման վրա հավատարմագրման գործընթացի ազդեցության ուսումնասիրությունը: Եվս երկու ուսումնասիրությունների արդյունքներ՝ “Գործատուների համատեքստի ներառումը կրթություն. գործատուի ներգրավման շրջանակ” և ՄԱՀԱԹՄԱ ծրագիրը որպես Հայաստանում և Վրաստանում կլաստերային հավատարմագրման փորձ” թեմաներով հրապարակվել են 2017թ.:

Հաշվետու տարում կառույցը մշակել է բուհ-գործատու համագործակցության նոր մոդել: Առաջարկվող մոդելը ենթադրում է միջնորդավորված շփում գործատուի և դասախոսի միջև, երբ ամբիոնի վարիչն է պարբերական հանդիպումներ ունենում գործատուների հետ, վեր հանում նրանց կարիքներն ու պահանջները և դրանք տեսանյութերի միջոցով հասանելի դարձնում դասախոսներին՝ հնարավորություն տալով ըստ այդմ վերանայել դասավանդման և գնահատման մեթոդաբանությունը, մասնագիտության կրթական ծրագրերը: Առաջարկվող մոդելի կիրառման ժամանակ մեծ դեր ունի նաև անկախ փորձագետը, ով տեղեկացված է մոդելի սկզբունքների մասին, ունի կրթական ծրագրեր մշակելու և իրականացնելու փորձ: Անկախ փորձագետը վարում է հանդիպումները: Առաջարկվող մոդելը ՏԵՄՊՈՒՍ-ի ARARAT ծրագրի շրջանակներում հաջողությամբ փորձարկվել է տեղեկատվական տեխնոլոգիաների, իրավաբանության և մանկավարժության, այնուհետև ՈԱԱԿ-ի նախաձեռնությամբ նաև թարգմանչության ոլորտներում: Մոդելը ներկայացվել է Որակի ապահովման եվրոպական ֆորումում և արժանացել միջազգային փորձագետների դրական արձագանքին:

ՄՈՒՀ-երի միջև որակի ապահովմանն առնչվող փորձի փոխանակումն առավել արդյունավետ դարձնելու համար, արձագանքելով շահակիցների կարիքներին, շարունակվել է Որակի ապահովման աջակիցների ցանցի գործունեությունը: Ցանցի հիմնադրման աշխատանքները մեկնարկել են 2017թ.՝ Որակի ապահովման ամփոփիչ համաժողովի ընթացքում: Համաժողովից հետո մշակվել է նաև «Կրթության որակի ապահովման աջակիցների հիմնման հուշագիրը» և «Կրթության որակի ապահովման աջակիցների ցանցի աշխատանքային ընթացակարգը»: Ցանցում մինչ այժմ գրանցվել է 150 հոգի, ովքեր ներկայացնում են 20 քոլեջ և 14 բուհ: ՈԱԱԿ-ի ֆեյսբուքյան էջում բացվել է «Որակի աջակիցներ» էջ, որը դարձել է աշխույժ քննարկումների հարթակ քոլեջներից ցանցի անդամների համար: Ցանցի քարտուղարության ձևավորումը և Որակի ապահովման աջակիցների ցանցի ձևավորման և զարգացման պլանի օրացուցային մասի լրամշակումը ըստ ընթացակարգի նախատեսված է 2018թ.: Հաշվետու տարում իրականացվել է ցանցի անդամների 4 հանդիպում, որի ժամանակ քննարկվել են հետևյալ հարցերը.

- ինստիտուցիոնալ ինքնավերլուծության ձևաչափի համապատասխանությունը քոլեջների կարիքներին,
- քոլեջի առարկայական ծրագրի ձևաչափի մշակում,
- ՈԱԱԿ-ի վերապատրաստումների ազդեցությունը քոլեջներում տեղի ունեցող ինստիտուցիոնալ մակարդակով փոփոխությունների վրա:

Քննարկումների արդյունքում վերանայվել է Ինքնավերլուծության ձևաչափը, մշակվել է Ինքնավերլուծություն կատարելու ուղեցույց, կազմվել է առարկայական ծրագրի ձևաչափ քոլեջի համար, վերանայվել է «Որակի ապահովման ներքին համակարգ. ներդնում և զարգացում» վերապատրաստման ծրագիրը:

ՄՈՒՀ-երի միջև փորձի փոխանակման համար 2017թ. բազմաբնույթ միջոցառումներ են կազմակերպվել. կլոր սեղան-քննարկումներ, հանդիպում քոլեջների տնօրենների և որակի ապահովման աջակիցների հետ, այց ՄՈՒՀ-եր, խորհրդատվության և վերապատրաստումների կազմակերպում և այլն: 2017թ. բուհերի ծրագրային հավատարմագրման նախապատրաստվելու համար քննարկումներ են կազմակերպվել 4 առանցքային թեմաներով «Մասնագիտական ոլորտների համար կրթական վերջնարդյունքների դուրսբերում և մշակում», «Գործատու-բուհ համագործակցություն», «Ուսանողի գնահատում», «Օն-լայն կրթության հիմնախնդիրներ»:

ՄՈՒՀ-երի միջև փորձի փոխանակման լավ ձև է դարձել տարեվերջյան ամփոփիչ Որակի ապահովման շաբաթը, որը ավանդաբար ավարտվում է որակի ապահովման համաժողովով: «Որակը լսարանում՝ գնահատման համակարգի բարելավում» թեմայով որակի ապահովման չորրորդ ֆորումը տեղի ունեցավ 2017թ. փետրվարի 23-24-ին Հայաստանի ամերիկյան համալսարանում: Ֆորումի մասնակիցներն էին տարբեր ՄՈՒՀ-երի կրթության կառավարիչներ և դասախոսներ Հայաստանից, Ռուսաստանի Դաշնությունից, Բելգիայից, Շվեյցարիայից, Իռլանդիայից, Մեծ Բրիտանիայից, ինչպես նաև գործատուներ և ուսանողներ: Բուհերը և քոլեջները հնարավորություն ստացան ուսումնասիրել միմյանց դրական փորձը մեկ տարվա կտրվածքով, դրա հիման վրա վերանայել սեփական կարիքները, չափել ձեռբերումները, համեմատվելով ոլորտում ընթացող գործընթացների հետ և, որն ավելի կարևոր է, առաջիկա մարտահրավերների հաշվառմամբ հստակեցնել հաջորդ տարվա անելիքները:

Ուսումնասիրություններն ապացուցում են, որ ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպվող հավատարմագրման գործընթացները ՀՀ մասնագիտական ուսումնական հաստատություններում փոփոխությունների իրականացման արտաքին խթան են և նպաստում են դրանց զարգացմանը: Ուսումնական հաստատությունների հետ հարաբերություններում ՈԱԱԿ-ը հանդես է գալիս որպես գործընկեր-խորհրդատու՝ համակարգում որակի մշակույթի ձևավորման և խորացման գործում: Հաստատությունները մեծածավալ աշխատանքներ են իրականացնում իրենց գործունեության տարբեր ոլորտներում որակի ապահովման մեխանիզմների մշակման և գործարկման ուղղությամբ:

2. ՈԱԱԿ-Ի ՆԿԱՏՄԱՄԲ ՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ԱՃԻՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

ՀՀ մասնագիտական կրթության ոլորտում որակի ապահովման մարտահրավերներին և շահակիցների կարիքներին ընդառաջ՝ Հիմնադրամի ռազմավարական գերակայություններից է ՈԱԱԿ-ի, որպես մասնագիտական կրթության ոլորտում որակի արտաքին ապահովում

իրականացնող կառույցի, զարգացումը: ՈԱԱԿ-ն անում է ամեն ինչ՝ ունենալու անհրաժեշտ նյութական և մարդկային ռեսուրսներ, իրականացնելու իր հիմնական առաքելությունը,

կազմակերպելու շահակիցների կողմից ընդունելի, օբյեկտիվ և անկախ գնահատումներ: Իր գործունեության արդյունավետությունը ցուցադրելուն, կենտրոնի կողմից իրականացվող ներքին և արտաքին գնահատումների արդյունքները թափանցիկ դարձնելուն, շահակիցների հանդեպ և միջազգային ասպարեզում ՈԱԱԿ-ի գործընթացների հաշվետվողականությանն է ուղղված Հիմնադրամի որակի ներքին ապահովման համակարգը:

ՈԱԱԿ-ի նկատմամբ վստահության աճին ուղղված 2017թ.-ին գրանցվել են հետևյալ ձեռքբերումները:

Նպատակ 2.1. Հիմնադրամի կողմից կազմակերպված գնահատումները հանրության կողմից ճանաչվում են՝ որպես որակն օբյեկտիվորեն արտացոլող ցուցիչներ:

Այս նպատակին հասնելու համար հաշվետու տարում անհրաժեշտ էր՝

- գնահատումների արդյունքների վերաբերյալ շահակիցներին ապահովել տեղեկատվությամբ,
- ապահովել հանրության կողմնորոշումը՝ Հիմնադրամի գնահատումների հիման վրա:

ՈԱԱԿ-ն առանձնակի կարևորում է իր գործունեության թափանցիկությունը կրթական հանրության և հաշվետվողականությունը բոլոր շահակիցների առջև: Պարբերաբար կազմակերպվող հանդիպումները, պլանավորվող գործողությունների և մշակվող փաստաթղթերի լայն քննարկումները ոլորտի շահակիցների հետ, գործող չափանիշների, ձևաչափերի, ընթացակարգերի և այլ փաստաթղթերի հասանելիության ապահովումը, տարատեսակ խորհրդատվությունների, վերլուծությունների և հաշվետվությունների հրապարակումը կոչված են նպաստելու հասարակության վստահության ամրապնդմանը մասնագիտական կրթության համակարգի և ՈԱԱԿ-ի գործունեության նկատմամբ:

Հիմնադրամի կայքէջը, գործելով հայերեն և անգլերեն լեզուներով, 2017թ. ընթացքում հանրությանը հասանելի է դարձրել ՈԱԱԿ-ի գործունեությանը վերաբերող փաստաթղթային բազան և շարունակաբար լուսաբանել է հիմնադրամի արտաքին և ներքին գործընթացները: Հավատարմագրման գործընթացի վերաբերյալ առավել ամբողջական տեղեկատվություն է տրամադրում «Հավատարմագրման պետական գրանցամատյանը». ներկայումս հրապարակված են 23 ուսումնական հաստատությունների վերաբերյալ փաստաթղթերը: Կայքի «Նորություններ» բաժնում արվել է 106 տեղեկատվական բնույթի գրառում: Կանոնավոր կերպով թարմացվել են նաև մյուս բաժինները:

2017թ. հունիս ամսից հասանելի է դարձել կայքի այցելությունների վիճակագրությունը հաշվարկող «Google analytics» ծառայությունը, համաձայն որի նախորդ յոթ ամիսների ընթացքում ՈԱԱԿ-ի կայքն ունեցել է ընդհանուր 31640 էջադիտում: Կայքում առավել պահանջված բաժիններն են «Հավատարմագրում», «Ինստիտուցիոնալ հավատարմագրման գրանցամատյան», ինչպես նաև «Փորձագետներ», «Հրապարակումներ» և «Ուսանողներ» էջերը: Այցելուների մեծ մասի տարիքը տատանվում է 18-34-ի միջև:

Բացի ՈԱԱԿ-ի կայքից՝ ակտիվորեն գործել են Facebook, Youtube, Twitter, Flikcr էջերը սոցիալական ցանցերում, կառույցը ներառվել է նաև «Google bussiness» հավելվածում՝ առավել տեսանելի ու հասանելի դառնալով Google որոնողական համակարգում:

2017թ. ընթացքում ՈԱԱԿ-ի գործունեությունը դարձյալ գտնվել է նաև զանգվածային լրատվության միջոցների ուշադրության ներքո: Հեղինակային 35 նյութերում և 311 անդրադարձերում հատկապես մանրակրկիտ են լուսաբանվել ՈԱԱԿ-ի կազմակերպած կրթության որակի ապահովման շաբաթը, անդամակցությունը Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ցանցին և ՈԱԱԿ-ի մշակած և փորձարկած բուհ-գործատու համագործակցության մոդելը:

Տաղավարային հարցազրույցների, հեղինակային նյութերի, ռեպորտաժների տեսքով ՈԱԱԿ գործունեությանը և կրթության որակի խնդիրներին անդրադարձել են Հանրային, «Կենտրոն», «Ար», «Երկիր մեդիա», «Արմնյուզ», «Շողակաթ», «Արարատ», «Շանթ» հեռուստաընկերությունները, Հանրային և Լրատվական ռադիոները:

Էլեկտրոնային ԶԼՄ-ներից 2017թ. ընթացքում ՈԱԱԿ-ի գործունեությանը հեղինակային հրապարակումներով անդրադարձել են Henaran.am, Hayeli.am, Asekose.am, Ankakh.com, 1in.am, Panorama.am կայքերը, «Արմենպրես» լրատվական գործակալությունը:

Համաձայն «Google analytics» ծառայության՝ Հիմնադրամի գործունեությունը հանրությանը ներկայացնող կայքը նախորդ յոթ ամիսների ընթացքում ունեցել է ընդհանուր 31640 էջադիտում: Հեղինակային 35 նյութերում և 311 անդրադարձերում հատկապես մանրակրկիտ են լուսաբանվել ՈԱԱԿ-ի կազմակերպած կրթության որակի ապահովման շաբաթը, անդամակցությունը Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ցանցին և ՈԱԱԿ-ի մշակած և փորձարկած բուհ-գործատու համագործակցության մոդելը:

Բոլոր հավատարմագրումների փորձագիտական զեկույցները, ՈԱԱԿ-ի եզրակացությունները և Հավատարմագրման հանձնաժողովի որոշումները հրապարակված են ՈԱԱԿ-ի կայքէջում՝ «Հավատարմագրում» բաժնում:

Նպատակ 2.2. ՄՈՒՀ-երը բավարարված են գնահատման արդյունքներով՝ անկախ դրանց դրական կամ բացասական լինելուց:

Այս նպատակին հասնելու համար հաշվետու տարում անհրաժեշտ էր ապահովել՝

- վստահելի և ՄՈՒՀ-երի համար ընդունելի փորձագետների հասանելիություն,
- գնահատման արդյունքների բողոքարկման վստահելի մեխանիզմների առկայություն:

ՈԱԱԿ-ի կողմից իրականացվող գնահատումների նկատմամբ ուսումնական հաստատությունների վստահությունը էապես կախված է փորձագիտական խմբի անդամների մասնագիտական արհեստավարժությունից:

ՈԱԱԿ-ը մշակել է էլեկտրոնային բազայի նոր կառուցվածք՝ պարզեցնելու փորձագետների կողմից իրենց վերաբերյալ տեղեկատվությունը թարմացնելու և ընտրություն կատարելու գործընթացները: Նոր բազան թույլ է տալիս նախապատրաստվել նաև ծրագրային

հավատարմագրմանը՝ տեղեկատվություն պարունակելով փորձագետների նեղ մասնագիտական ուղղվածության, կրթական ծրագրերի մշակման կամ գնահատման փորձառության մասին: Նախապատրաստվելով միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հավատարմագրման գործընթացներին՝ նույնատիպ էլեկտրոնային բազա է գործարկվել նաև ՄԿՈ ոլորտի փորձագետների գրանցման համար:

Փորձագետների բազաների ընդլայնման համար հանդիպումներ են տեղի ունեցել հանրապետության և արտերկրի մի շարք բուհերի, ինչպես նաև մասնագիտական միությունների ներկայացուցիչների հետ, որոնք հետագայում համալրում են ՈԱԱԿ-ի տեղացի և միջազգային փորձագետների բազաները: Ներկայումս այդ բազաներում ընդգրկված են շուրջ 400 փորձագետ:

Ուսանող փորձագետների նախապատրաստման աշխատանքները կազմակերպվում են ՈԱԱԿ-ի «Ուսանողության ձայն» ցանցի միջոցով, որը համագործակցում է Ուսանողների ազգային ասոցիացիայի, բուհական կառույցների և առանձին ուսանողների հետ: «Ուսանողության ձայնը» սկսել է աշխատանքները նաև քոլեջների հետ՝ նրանց ներկայացուցիչներին ներգրավելով ցանցում: 2017թ. ընթացքում ՈԱԱԿ-ի «Ուսանողության ձայն» նախագիծը իրականացրել է 10 ուսանող-փորձագետների վերապատրաստում:

Հաշվետու տարում ԵՄ ՏԵՄՊՈՒՍ «ԷՍՊԱՔ դրամաշնորհային ծրագրի շրջանակներում կնքվել է Համագործակցության հուշագիր ՈԱԱԿ-ի, ԿԳ նախարարության և ՀՈՒԱԱ-ի միջև, որի հիմնական նպատակն է ընդլայնել ուսանողների դերը և բարձրացնել ուսանողների ներգրավվածությունը որակի ապահովման գործընթացներում: Համագործակցության շրջանակներում նաև ստեղծվել է ՀՈՒԱԱ-ին կից գործող Ազգային ուսանող-փորձագետների /ԱՈՒՓ/ անկախ մարմին: Համաձայն հուշագրի՝ ՈԱԱԿ-ը պարտավորվում է հավատարմագրման գործընթացների մեկնարկի վերաբերյալ տեղեկատվություն հաղորդել ԱՈՒՓ ղեկավար կոմիտեին՝ վերջինիս կողմից փորձագետներ առաջադրելու համար և ապահովել ուսանող-փորձագետների հավաքագրման գործընթացի թափանցիկությունն ու կայունությունը:

ՈԱԱԿ-ը պարտավորվում է միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացին ծանոթացնելու, ինչպես նաև փորձագիտական աշխատանքին նախապատրաստելու նպատակով, անցկացվել է փորձագետների վերապատրաստում տարբեր քոլեջների 15 ներկայացուցիչների հետ:

Հավատարմագրման հանձնաժողովի որոշումների բողոքարկման մեխանիզմները նախատեսված են հավատարմագրման կարգով և փորձաքննության անցկացման ձեռնարկով: Հաշվի առնելով, որ հավատարմագրման ներկա փուլում փախվել է բողոքարկման վերաբերյալ մոտեցումը, ՈԱԱԿ-ը հաշվետու տարում ձեռնամուխ է եղել բողոքարկման նոր ընթացակարգի մշակմանը:

Առցանց հարցաշարի զարգացման արդյունքում հնարավորություն է ձևավորվել ունենալ առարձնացված բազաներ ծրագրային և ՄՄՈՒՀ-երի հավատարմագրման փորձագետների ընտրության համար: Գրեթե բոլոր մասնագիտությունների խմբերի գծով գրանցված են գրեթե 400 փորձագետներ: Ուսանող-փորձագետների հավաքագրման գործընթացի թափանցիկությունն ու կայունությունն ապահովելու նպատակով ՈԱԱԿ-ի, ԿԳՆ-ի և ՀՈՒԱԱ-ի համագործակցության շրջանակներում ստեղծվել է Ազգային ուսանող-փորձագետների անկախ մարմին:

Նպատակ 2.3. Հիմնադրամն ապահովում է իր գործունեության անկախությունը:

Այս նպատակին ուղղված հաշվետու տարում անհրաժեշտ էր ապահովել՝

- գնահատումների անաչառությունը,
- Հիմնադրամի ֆինանսական անկախությունը:

ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպվող հավատարմագրման նպատակով իրականացվող փորձագիտական գնահատումների անաչառությունն ապահովող ընթացակարգերը վստահելի են շահակիցների և միջազգային փորձագետների համար: Արտաքին փորձաքննություն իրականացնող խմբի պնդմամբ գնահատման մեխանիզմները հստակ ձևակերպված են, իսկ գործընթացն իրականացվում է մշակված ընթացակարգերին համապատասխան: Գնահատումների սուբյեկտիվիզմից խուսափելու համար գործընթացների բոլոր մասնակիցները առաջնորդվում են ՈԱԱԿ-ի էթիկայի և բարեվարքության կանոններով, որոնք կարգավորում են նրանց՝ անաչառությանն առնչվող վարքագիծը:

Բուհերի ներկայացուցիչների 67 տոկոսը, համաձայն հարցման արդյունքների, վստահ է, որ փորձագիտական զեկույցն արտացոլում է հաստատությունների իրական վիճակը: 33 տոկոսն այդ կարծիքի հետ մասամբ համաձայն չէ, սակայն անհամաձայնությունը վերաբերում է բուհի թույլ կողմերին՝ համաձայնելով զեկույցում նշված ուժեղ կողմերի հետ:

Փորձագետների շահամիտվածությունն արտահայտվել է գործընթացներում կրկին ընդգրկվելու ցանկությամբ՝ պայմանավորված թե վարձատրության, թե ՈԱԱԿ հետ համագործակցելու ցանկության հանգամանքներով:

Գնահատումների անկախությունը երաշխավորելու, ինչպես նաև փորձագետներին մոտիվացնելու նպատակով նպատակով ՈԱԱԿ-ը միշտ կարևորել է փորձագետների պատշաճ վարձատրությունը: Բուհերի համար նախորդ տարիներին մշակվել էին փորձագետների վարձատրության չափի հիմնավոր և հստակ հաշվարկի մոտեցումներ, սակայն քոլեջների համար անհրաժեշտություն առաջացավ վերանայել դրանք /կապված քոլեջների ցածր վճարողունակության հետ/: 2017թ. տարեվերջին մշակվեց համապատասխան ձևաչափ քոլեջների համար, որը դեռ քննարկման փուլում է. քոլեջների համար դիտարկվում է փոքրաթիվ փորձագիտական խմբերի և կարճատև փորձագիտական այցի հնարավորությունը:

ՈԱԱԿ-ն ամեն տարի հաշվարկում և ներկայացնում է պահպանման ծախսերը՝ ստանալու պետական ֆինանսավորում: Հավատարմագրման դիմող ՄՈՒՀ-ի և ՈԱԱԿ-ի միջև կնքված՝ վճարովի ծառայությունների կատարման պայմանագրի հիման վրա ՄՈՒՀ-ը հոգում է հավատարմագրման գործընթացին առնչվող բոլոր ծախսերը: Արտաքին գնահատման վճարը, Հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատված սակագների հիման վրա, հաշվարկվում է ՈԱԱԿ-ի կողմից՝ կախված արտաքին գնահատման բնույթից և տևողությունից, ներգրավված փորձագետների թվից և այլ պայմաններից: Իր ֆինանսական քաղաքականությանը համահունչ՝ ՈԱԱԿ-ը ձգտում է հասնել եկամտի դիվերսիֆիկացիայի ավելի բարձր մակարդակի: Ֆինանսական միջոցների հայթայթման այլ մեխանիզմներն են միջազգային ծրագրերում մասնակցությունը, դասավանդողների և ՄՈՒՀ-երի որակի ապահովման

պատասխանատու աշխատակազմի համար վերապատրաստումները, մասնագիտական ուսումնական հաստատությունների աշխատակազմի համար վերապատրաստումները, վճարովի հիմունքով ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպվող համաժողովները և այլն:

Ստորև ներկայացվում է եկամտի աղբյուրների բազմազանեցման առաջընթացը.

Եկամտի աղբյուր	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016	2017
	մասնաբաժին (%)								
Պետական ֆինանսավորում	97.8	95.9	93.5	88.5	84.7	68.1	48.5	56.6	52.2
Հավատարմագրման վճարումներ	2.2	0.7	1.0	6.5	5.4	1.4	35.5	15.2	19.5
Վերապատրաստումներ/ խորհրդատվություն	0.0	3.4	3.8	0.0	0.0	2.1	0.6	2.5	1.95
Միջազգային ծրագրեր	0.0	0.0	1.7	2.4	9.8	28.4	15.4	25.7	24.4
Այլ	0.0	0.0	0.0	2.6	0.2	0.0	0.0	0.0	1.95



Պետական բյուջեից ստացվող եկամուտների կշռի նվազման միտումը և եկամուտների դիվերսիֆիկացիայի մակարդակը վկայում են ՈԱԱԿ-ի ֆինանսական անկախության մեծացման մասին:

Նպատակ 2.4. Հիմնադրամն արդյունավետ գործունեություն իրականացնող կայուն կազմակերպություն է:

Այս նպատակին ուղղված հաշվետու տարում անհրաժեշտ էր ապահովել՝

- կառավարման համակարգի արդյունավետությունը,

- Հիմնադրամն անհրաժեշտ ռեսուրսներով,
- ՈԱ վստահելի ներքին համակարգի առկայությունը:

Մարդկային ռեսուրսների կառավարում

Կազմակերպական կառուցվածքի համաձայն՝ ՈԱԱԿ-ն ունի 3 բաժին (Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության, Քաղաքականության մշակման ու իրականացման, ՈԱԱԿ քարտուղարություն) և վարչական ու օժանդակ կազմ:

ՈԱԱԿ անձնակազմ	Քանակ
1. Տնօրեն	1
2. Գլխավոր մասնագետ/բաժնի ղեկավար	3
3. Ավագ մասնագետ	4
4. Մասնագետ	5.5
5. Վարչական կազմ	6.5
6. Օժանդակ կազմ	2.5
Ընդամենը	22

Տարվա ընթացքում Հիմնադրամը համալրվել է 2 նոր աշխատակցով, իսկ աշխատանքից դուրս է եկել 1 աշխատակից: Եղել են կադրային տեղափոխություններ՝ նոր պաշտոնի նշանակմամբ և կարգի բարձրացմամբ:

Քանի որ որակի ապահովումը ՀՀ-ում զարգացող ոլորտ է, մրցունակ անձնակազմի հավաքագրումը դեռևս մնում է որպես մարտահրավեր: Այդ իսկ պատճառով իր առաքելությունն իրականացնելու, գործունեության որակն ապահովելու նպատակով հաշվետու տարում՝ ՈԱԱԿ-ի մարդկային ռեսուրսների կառավարման քաղաքականության հիման վրա կիրառության մեջ է դրվել աշխատողի ինքնագնահատման և ինքավերլուծության հարցաշարը, որը հնարավորություն է տալիս ՄՌ կառավարումն իրականացնելիս առավել ճշգրիտ կողմնորոշվել աշխատողի գնահատման, վերապատրաստման և կարերայի հետագա պլանավորման համար:

Հիմնադրամն աշխատողի մասնագիտական զարգացման համար կարևորում է աշխատողների շարունակական վերապատրաստումը, կարողությունների և հմտությունների զարգացումը: Այդ առումով 2017թ. հնարավորություն է տվել մասնակցել մի շարք վերապատրաստումների Հայաստանում և արտասահմանում (այդ թվում Ֆրանսիա, Անգլիա, Բելգիա, Հոլանդիա, Վրաստան, Ռուսաստան, Իսպանիա, Լատվիա, Ուկրաինա և այլն): Վերապատրաստման թեմաները եղել են տարբեր՝ կրթական ծրագրերի համահնչությունը ՈԱԾ-ին, դրանց գնահատումը, տրանսազգային կրթության հիմնահարցեր, բուհ-գործատու համագործակցության խթանում և զարգաում և այլն:

ՈԱԱԿ-ը կարևորում է իր աշխատակազմի մասնագիտացման խնդիրը: Ուսումնասիրելով ազգային և միջազգային փորձագետների խորհրդատվությունները, ոլորտի զարգացման միտումներն ու բուհերից հետադարձ կապը, ինչպես նաև աշխատողների կողմից իրականացված ինքնագնահատումը, ՈԱԱԿ-ը սահմանել է բազմագործոնային աշխատող

ունենալու քաղաքականություն. այն է աշխատակիցը, բացի իրեն հանձնարարվարված հիմնական ուղղությունից, կատարում է այնպիսի աշխատանք, որն առնչվում է Հիմնադրամի կողմից իրականացվող մեկ այլ գործունեությանը: Մասնագիտացման ոլորտները սահմանված են որակի ապահովման չափանիշների և չափորոշիչների համաձայն. յուրաքանչյուր աշխատող պատասխանատու է մեկ ուղղության համար, օրինակ՝ կրթական ծրագրեր (ուսանողակենտրոն ուսումնառություն, ուսանողների գնահատում, դասավանդման և ուսումնառության փորձեր, ուղղահայաց և հորիզոնական համապատասխանություն և այլն), կառավարում և վարչարարություն, պրոֆեսորադասախոսական կազմ, հետազոտություն և միջազգայնացում, որակի ներքին ապահովում և այլն:

Ընթացիկ տարում պարբերաբար հարցումներ են իրականացվել՝ պարզելու աշխատանքային միջավայրից աշխատակազմի բավարարվածության աստիճանը: Մինչ այժմ անցկացված հարցումների արդյունքները ցույց են տվել, որ աշխատողները հիմնականում բավարարված են աշխատանքային միջավայրով և կարծում են, որ այն արդյունավետ է ու համագործակցային բնույթ է կրում: Հարցման մեջ առանձնացվում են հետևյալ գործոնները.

		2017
	Աշխատակազմի անդամների անձնական ձեռքբերում	100%
	Աշխատանքային ծանրաբեռնվածությունը ողջամիտ սահմաններում է	88%
	Ես բավականաչափ գնահատվում եմ իմ ղեկավարի կողմից	56%
	Ընդհանուր բավարարվածությունը ստացած վերապատրաստումից	100%
	Ես վստահում եմ տնօրենին	100%
	Ես ունեմ գիտելիք և փորձ իմ պարտականությունները կատարելու համար	100%
	Ես ունեմ անհրաժեշտ ռեսուրսները իմ աշխատանքը իրականացնելու համար	100%
	Այն մարդիկ, ում հետ աշխատում եմ, համագործակցում են աշխատանքը կատարելու համար	89%
	Ընդհանուր բավարարվածությունն աշխատանքից	100%

Վերջին 3 տարիների զարգացման միտումները ցույց են տալիս, որ առկա է բարելավում կառավարման ոլորտում՝ շնորհիվ ոլորտի որակի պատասխանատուների վերլուծությունների:

Աշխատակազմի գործունեության և հմտությունների գնահատման համակարգի հիմքում մնում է նախորդ տարում ներդրված «աշխատողի ինքնագնահատման և ինքնավերլուծության մոդելը». հիմնադրամի տնօրենը հանդիպում է աշխատողների հետ և նրանց հետ համատեղ

իրականացնում կատարողականի SWOT վերլուծություն: Քննարկման արդյունքները թույլ են տալիս վերհանել յուրաքանչյուր աշխատողի ուժեղ և թույլ կողմերը, նրանց վերապատրաստման կարիքները:

ՈԱԱԿ-ի աշխատակիցների մասնագիտական բարձր կարողությունների մասին են շեշտում միջազգային փորձագետներն ու գործընկերները: Նրանք նույնպես գտնում են, աշխատակազմի կարողությունները, առկան մարդկային և նյութական ռեսուրսները բավարար են Հիմնադրամի ռազմավարական նպատակներն իրականացնելու համար:

Նյութատեխնիկական ռեսուրսների կառավարում

Առօրյա աշխատանքային արդյունավետ գործունեություն ծավալելու համար (բաժինների աշխատանքների, հավատարմագրման գործընթացների կազմակերպման, միջազգային փորձագետներին առցանց ներգրավելու, Հավատարմագրման հանձնաժողովի անդամների առցանց ներկայությունն ապահովելու (երկրից բացակայելու դեպքում), բուհերի ներկայացուցիչների և ՈԱԱԿ-ի աշխատակիցների հեռավար վերապատրաստումներ, տարատեսակ հանդիպումներ և քննարկումներ կազմակերպելու համար) Հիմնադրամն ապահովված է ժամանակակից սարքավորումներով և համապատասխան հարմարություններով: ՈԱԱԿ-ի ջանքերով և եվրոպական աջակցման ծրագրերի միջոցով սարքավորումներն արդիականացվել են, իսկ կառավարման գործընթացում ներդրվել են ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներ:

ՈԱԱԿ-ի ռազմավարական ծրագրի իրականացման և որակի արտաքին գնահատման ռեսուրսների արդյունավետ կառավարման տեսանկյունից նյութական ռեսուրսները գնահատելու համար տարին երկու անգամ իրականացվում են հարցումներ ՈԱԱԿ-ի աշխատակազմի շրջանում, և յուրաքանչյուր հավատարմագրման գործընթացից հետո՝ մեկ անգամ փորձագետների շրջանում:

Ըստ հարցումների արդյունքների՝ աշխատողներն ընդհանուր առմամբ բավարարված են սարքավորումներով և աշխատանքային պայմաններով (2017 թ.՝ 100%): Նրանք գտնում են, որ ՈԱԱԿ-ն ունի տեխնիկական և ֆիզիկական անհրաժեշտ հնարավորություններ՝ որակի արտաքին գնահատման գործընթացներն ու այլ գործողությունները կազմակերպելու և դրանք արդյունավետ կերպով իրականացնելու համար: Ինչ վերաբերում է համակարգչային ծրագրերի որակին և քանակին, աշխատողների 100%-ը բավարարված է առկա ծրագրերից և համակարգիչների արագությունից, որն անհրաժեշտ է աշխատանքային գործունեության արդյունավետությունն ապահովելու համար: ՈԱԱԿ-ի ներքին գործընթացների ավտոմատացման համակարգի՝ Docflow-ի վերաբերյալ պետք է նշել, որ ըստ անցկացված հարցման՝ աշխատողների 92%-ը բավարարված են եղել Docflow համակարգում առկա տեղեկատվությամբ: Տեղեկատվության որոնմանն ու օգտագործմանը, ինչպես նաև բոլոր ծրագրերի անվտանգության ապահովմանն առնչվող քաղաքականություններն ու ընթացակարգերը սահմանված են SS-ին և ռեսուրսներին վերաբերող պրոտոկոլներում:

ՈԱԱԿ-ի կողմից իրականացվող գործընթացների պարբերական գնահատում

Հավատարմագրման գործընթացի շարունակական բարելավման նպատակով մշտապես կատարվում է իրականացված գործընթացների արդյունավետության վերլուծություն:

Վերջինս հնարավորություն է տալիս բացահայտել գործընթացի փաստացի վիճակը, ուժեղ կողմերը, խնդիրներն ու բացթողումները, վերանայել ու կատարելագործել (ըստ նպատակների ու խնդիրների) փաստաթղթային հենքն ու ողջ գործընթացը: 2015-2017թթ. իրականացված հավատարմագրման գործընթացների արդյունավետության գնահատումն ու վերլուծությունն իրականացնելու նպատակով ըստ հավատարմագրման գործընթացի առանձին փուլերի (ինքնավերլուծություն, նախնական գնահատման գործընթաց, փորձագիտական այց, փորձագիտական զեկույց) անցկացվել է անանուն հարցում հավատարմագրված բուհերի և տեղացի ու միջազգային փորձագետների շրջանում: Հավատարմագրման գործընթացի արդյունավետության գնահատումն ըստ փուլերի ներկայացված է ստորև.

1. Ինքնավերլուծության գործընթաց (100 %),
2. Նախնական գնահատման գործընթաց (100 %),
3. Փորձագիտական այց (100%),
4. Փորձագիտական զեկույց (83%):

Վերլուծության ժամանակ անդրադարձ է կատարվել նաև ՈԱԱԿ-ի կողմից փորձագետներին տրամադրվող փաստաթղթերի փաթեթին (օրենսդրական, նորմատիվ փաստաթղթեր, ունենիշներ, ձևաչափեր և այլն), թե տրամադրված փաստաթղթերն որքանո՞վ են բավարար արդյունավետ փորձաքննություն իրականացնելու համար: Փորձագետների 89% բավարար է գանահատել տրամադրվող փաթեթը:

Վերլուծության ժամանակ անդրադարձ է կատարվել նաև փաստաթղթերի նախնական ուսումնասիրման գործընթացի արդյունավետությանը, որը դիտարկվել է ըստ հետևյալ խնդիրների՝

- ընդհանուր պատկերացում կազմել ՄՈՒՀ-ի վերաբերյալ (100%),
- դուրս բերել հիմնախնդիրներ/հարցեր փորձագիտական այցի ընթացքում պարզաբանելու նպատակով (96%),
- պատրաստել փորձագիտական զեկույց (89%):

Հիմք ընդունելով ստացված տվյալները՝ կարելի է փաստել, որ նախնական գնահատման գործընթացն արդյունավետ է կազմակերպվում: Փորձաքննության այս փուլը ծառայում է իր նպատակին, փորձագետները կարողանում են հաստատության վերաբերյալ ընդհանուր պատկերացում կազմել, գնահատել ուժեղ և թույլ կողմերը:

Փորձագետները գնահատել են նաև փորձագիտական այցի արդյունավետությունը և թե որքանով են փորձագետների առջև դրված նպատակներն իրականացվել: Ուսումնասիրվել է իրականացված այցերի արդյունավետությունը (100%), հանդիպումների իրականացման ձևաչափի հարմարավետությունն ու օգտակարությունը տեղեկատվություն ստանալու տեսանկյունից (91%), հաստատության կողմից լրացուցիչ տեղեկատվություն տրամադրելու պատրաստակամությունը (93%): Անդրադարձ է կատարվել նաև հանդիպումների օպտիմալ տևողությանը (45-60 րոպե): Փորձագետները գնահատել են նաև փորձագիտական զեկույցի ձևաչափը և դրա օգտակարությանը: Վերլուծությունը ցույց է տալիս, որ փորձագետների 93% բավարարված է փորձագիտական խմբի զեկույցի ձևաչափով:

Բարելավմանը միտված գործողությունների պլանավորում և իրականացում

Նորմատիվային ակտերում տեղի ունեցած փոփոխությունների, արտաքին և ներքին գործընթացների պարբերական գնահատման, հավատարմագրման գործընթացի արդյունավետության վերլուծության, ինչպես նաև Հավատարմագրման հանձնաժողովի, տեղացի և միջազգային փորձագետների արձագանքների հիման վրա վերանայվել ու լրամշակվել են ՈԱԱԿ-ի կողմից իրականացվող գործընթացները կանոնակարգող մի շարք փաստաթղթեր:

ՈԱԱԿ-ի արտաքին գնահատման արդյունքում ստացված խորհրդատվությունների հիման վրա մշակվել է թերությունների վերացման ծրագիր- ժամանակացույց: Համաձայն ժամանակացույցում սահմանված նպատակների՝ հաշվետու տարում իրականացվել է՝

1. 4.վերանայվել/լրամշակվել են հավատարմագրման գործընթացը կանոնակարգող հետևյալ փաստաթղթերը և ձևաչափերը՝
   - Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն հիմնադրամի հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգը (հաստատումը նախատեսված է 2018թ.-ին),
   - առաջարկություններ ,,ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգի,, փոփոխության վերաբերյալ (հաստատումը նախատեսված է 2018թ.-ին),
   - ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության ձևաչափը (հայերեն և անգլերեն լեզուներով)՝
     - տրանսազգային կրթություն իրականացնող հաստատությունների համար,
     - միջին մասնագիտական կրթության համակարգի հաստատությունների համար,

2. իրականացվել է փորձագիտական զեկույցների մշտադիտարկում,

3. մեկնարկել է 2015-2017թ.-ին իրականացված հավատարմագրման գործընթացների արդյունավետության վերաբերյալ համապարփակ վերլուծությունը: Վերլուծության հրապարակումը նախատեսված է 2018թ-ին:

4.մշակվել է ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշ/չափորոշիչների մեկնաբանման վերաբերյալ ուղղորդող կետերի նախագիծը:

ՈԱԱԿ-ի կողմից իրականացված վերլուծությունների արդյունքները և փորձագետների դիտարկումները թույլ ն տալիս փաստել, որ կրթական համակարգի բարելավման և զարգացման գործում հավատարմագրման գործընթացի ազդեցությունը զգալի է:

Հաստատությունները հավատարմագրման գործընթացը համարում են արդյունավետ գործիք կառավարման արդյունավետությունը մեծացնելու, գործունեությունը կանոնակարգելու և հստակեցնելու տեսանկյունից: Փորձագիտական զեկույցները կարևոր դեր են խաղում բուհի թույլ, ուժեղ կողմերը և մատահրավերները բացահայտելու տեսանակյունից:

Տեղացի և միջազգային փորձագետների կարծիքով ՈԱԱԿ-ի կողմից իրականացված հավատարմագրման գործընթացները կազմակերպվել են բարձր պրոֆեսիոնալիզմով. միջազգային փորձագետները մասնավորապես գոհունակություն են հայտնել փորձագիտական խմբի ղեկավարների, համակարգողների պատրաստվածության մակարդակ:

3. ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ

Հիմնադրվելու առաջին իսկ օրվանից ՈԱԱԿ-ն ակտիվ քայլեր է ձեռնարկել իր գործունեությունը միջազգայնացնելու և միջազգային կազմակերպությունների կողմից ճանաչում ձեռք բերելու ուղղությամբ՝ դրանով իսկ նպաստելով ՀՀ մասնագիտական կրթության դիրքերի ամրապնդմանը միջազգային մակարդակում:

Նպատակ 3.1. Հիմնադրամն անդամակցում է միջազգային ճանաչում ապահովող կառույցներին, մասնակցում ծրագրերին:

Այս նպատակին ուղղված հաշվետու տարում անհրաժեշտ էր՝

- ապահովել Հիմնադրամի անդամակցությունը միջազգային ճանաչում ունեցող կառույցներին:

Իրականացված հավատարմագրման արդյունքները միջազգային մակարդակով ճանաչելի դարձնելու, ինչպես նաև ՀՀ կրթական համակարգի նկատմամբ միջազգային Հիմնադրամների վստահությունը բարձրացնելու նպատակով, ՈԱԱԿ-ը 2017թ.-ին դարձել է Որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի (ENQA) լիիրավ անդամ և գրանցվել Որակի ապահովման եվրոպական գրանցամատյանում (EQAR): ENQA-ի կողմից արտաքին գնահատումը հավաստեց՝ որքանով են իրականացվող գործընթացները համապատասխանում Որակի ապահովման եվրոպական չափանիշների և ուղենիշների (ESG) պահանջներին՝ ինչպես ՀՀ-ում որակի արտաքին ապահովման գործընթացների կազմակերպման, այնպես էլ ՈԱԱԿ-ի որակի ներքին ապահովման գործընթացների իրականացման տեսանկյունից:

2017թ.-ին ՈԱԱԿ-ը դարձել է նաև Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի բարձրագույն կրթության որակի ապահովման գործակալությունների ցանցի (CEENQA) անդամ:

ՈԱԱԿ-ի միջազգայնացմանն ուղղված քայլերը 2017թ. շարունակվել են հետևյալ գործընթացների շուրջ.

- ՈԱԱԿ-ն ակտիվ մասնակցություն է ցուցաբերել INQAAHE, ENQA միջազգային ցանցերի աշխատանքներին, զեկուցմամբ հանդես եկել INQAAHE-ի համաժողովում և EQAF-ում(Որակի ապահովման եվրոպական ֆորում):
- Հիմնադրամը ներկայացված է INQAAHE-ի կառավարման խորհրդում:
- Ակտիվ համագործակցում է Եվրամիության և նախկին Խորհրդային միության երկրների որակի արտաքին ապահովման գործակալությունների հետ:
- Կառույցի նախաձեռնությամբ մշակվել են 2 ERASMUS+ ծրագրերի դիմում-հայտ, որոնք ներկայացվլ են ֆինանսավորման 2018թ.-ին: Եվս 6 ծրագրի մասնակցության հայտ է ստորագրվել:
- Միջազգային ծրագրերի (ՏԵՄՊՈՒՍ) շրջանակներում ՈԱԱԿ-ի անձնակազմը հնարավորություն է ունեցել մասնակցելու մի շարք մշակումների/ վերապատրաստումների ինչպես Հայաստանում, այնպես էլ՝ արտերկրում: Վերապատրաստումների արդյունքում ՈԱԱԿ-ում ձևավորվել է համապատասխան ներուժ, որը նպաստում է հավատարմագրման գործընթացների արդյունավետ իրականացմանը, ինչպես նաև որակի մշակույթի ձևավորմանն ու ամրապնդմանը:

- ՈԱԱԿ-ը, որպես ղեկավար/համակարգող գործընկեր հաստատություն, ակտիվորեն մասնակցել է ՏԵՄՊՈՒՍ-ի 8 ծրագրերում: Ծրագրերը միտված են մասնագիտական կրթության ոլորտի զարգացմանը, որակի ապահովման համակարգի ամրապնդմանը՝ անդրադառնալով համակարգում գոյություն ունեցող խնդիրներին:

Նպատակ 3.2. Հիմնադրամն իրականացրել է ՄՈՒՀ-երի գնահատում արտերկրում և իր մատուցած ծառայությունների որակով չի զիջում նմանատիպ եվրոպական գործակալություններին:

Այս նպատակին ուղղված հաշվետու տարում անհրաժեշտ էր՝

- ձևավորել պահանջարկ Հիմնադրամի ծառայությունների նկատմամբ և սկսել օտարերկրյա մուհերի գնահատում,
- իրականացնել համատեղ գնահատումներ միջազգային ճանաչում ունեցող այլ կառույցների հետ:

Որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի (ENQA) լիիրավ անդամակցությունը ՈԱԱԿ-ը պլանավորում է օգտագործել օտարերկրյա մասնագիտական ուսումնական հաստատությունների հավատարմագրում իրականացնելու համար: Ներկայումս ուսումնասիրվում է համանման կառույցների միջազգային հավատարմագրման փորձը և մշակման փուլում է գործընթացը համակարգող փաստաթղթերի փաթեթը. օտարերկրյա ՄՈՒՀ-երի հավատարմագրման ընթացակարգը, գնային քաղաքականությունը, փորձագետների ներգրավման կարգը և այլն:

Ռազմավարական մյուս խնդիրն է հավատարմագրման այլ կառույցների հետ համատեղ գնահատումների իրականացումը: ՈԱԱԿ-ն ունի ծրագրային հավատարմագրման նպատակով համատեղ գնահատման փորձառություն Գերմանիայի բնական գիտությունների, ճարտարագիտության, ինֆորմատիկայի և մաթեմատիկայի որակի ապահովման կենտրոնի (ASIIN) հետ: 2017թ. ՏԵՄՊՈՒՍԻ GOVERN ծրագրի շրջանակներում Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայում նույն կազմակերպության հետ իրականացվել է համատեղ գնահատում ինստիտուցիոնալ հավատարմագրման նպատակով:

2017թ. ASIIN-ի հետ Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայում իրականացված համատեղ գնահատումը լավ փորձ էր ՈԱԱԿ-ի համար նմանատիպ գործընթացների մասնակցելու տեսակետից:

Օտարերկրյա ՄՈՒՀ-երի հավատարմագրման գնային քաղաքականությունը մշակված է, փորձագետների ներգրավման կարգը մշակման փուլում է:

Համաձայնություն է ձեռք բերվել ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարարության հետ Արցախի բուհերում որակի ապահովման համակարգերի ներդրմանն աջակցելու և հավատարմագրման գործընթացներ իրականացնելու վերաբերյալ:

4. ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

Մասնագիտական կրթության համակարգի զարգացման միտումները, առկա ձեռքբերումները և մարտահրավերները քննարկվում են ավանդական դարձած համաժողովի ժամանակ: 2017թ. տեղի ունեցավ որակի ապահովման չորրորդ ֆորումը «Որակը լսարանում՝ գնահատման համակարգի բարելավում» թեմայով: Ֆորումին մասնակցել են ՀՀ բոլոր բուհերի և ՄՄՈՒՀ-երի կառավարիչներ և դասախոսական կազմի ներկայացուցիչներ, գործատուներ և ուսանողներ, միջազգային փորձագետներ և հյուրեր:

Համակարգային վերլուծության և ֆորումի ժամանակ բարձրաձայնված խնդիրներից հատկանշական են հետևյալները.

- Մասնագիտական ուսումնական հաստատությունների կողմից առաջարկվող ոչ բոլոր մասնագիտական կրթական ծրագրերն են բավարար արդիական, իսկ իրականացումը՝ ուսանողակենտրոն: Ծրագրերի ակնկալվող վերջնարդյունքները մասամբ են համապատասխանում ՈԱՇ-ի, նաև աշխատաշուկայի պահանջներին: Քիչ են ճկուն կրթական ծրագրերը, կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգը լիարժեք չի գործում, դասավանդման մեթոդների արդիականացումը դանդաղ է ընթանում:

- Հաստատությունները, օգտվելով օրենսդրական այն դրույթից, որ ծրագրային հավատարմագրումը կամավոր գործընթաց է, դեռևս չեն դիմում ծրագրային հավատարմագրման, որտեղ անմիջականորեն կգնահատվեն ուսանողի մասնագետ դառնալու գործընթացում առկա խնդիրներն ու խոչընդոտները և կհավաստվի մասնագետների մրցունակությունը տեղական և միջազգային աշխատաշուկաներում: ՈԱԱԿ-ի առաջարկի հիման վրա նախատեսվող կրթական ծրագրերի /ծրագրերի խմբի/ հավատարմագրման պարտադիր պահանջի ներդրումը թույլ կտա բարելավել կրթության տարբեր բաղադրիչները և ունենալ աշխատաշուկայի պահանջներին համապատասխանող ժամանակակից ծրագրեր:

- Մասնագիտական ուսումնական հաստատությունների ենթակառուցվածքները դեռևս չունեն բավարար անկախություն և ֆինանսական ինքնավարություն՝ իրենց գործունեությունը պլանավորելու և իրականացնելու առումով, կառավարումը մեծ մասամբ չի իրականացվում ՊԻՍԲ /Պլանավորում-Իրականացում-Ստուգում-Բարելավում/ որակի կառավարման սկզբունքով:

- Բուհերում աշխատող պրոֆեսորադասախոսական կազմը երբեմն չի բավարարում վերափոխված կրթական ծրագրերի պահանջներին, չի տիրապետում դասավանդման ժամանակակից մեթոդների, բավարար չափով ներգրավված չէ հետազոտություններում: Առկա է դասախոսական անձնակազմի սերնդափոխության խնդիր: Բուհերը բավարար պայմաններ չեն ստեղծում դասախոսական կազմի վերապատրաստման և երիտասարդացման համար:

- Հաստատությունների հետազոտական և ուսումնական բազաները հիմնականում հնաոճ են և միշտ չէ, որ բավարար են հատկապես մագիստրոսական ծրագրերի իրականացման և

ակնկալվող մասնագիտական վերջնարդյունքների ձևավորման համար: Կրթական և հետազոտական գործունեությունները լիարժեք փոխկապակցելու խնդիրներ կան:

- Բուհերում դեռևս ցածր է շահակիցների և հեղինակություն վայելող դասախոսների մասնակցությունը որակի ապահովման գործընթացներին, որակի ապահովումը դեռևս չի դարձել մշակույթ, իսկ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում որակի ապահովման համակարգը ներդրման սկսզբնափուլում է: